

Լրագրները հաղորդում են, որ Վեննայի Մխիթարեան միաբանութեան վանքում տեղի պէտք է ունենայ նորահաստատ արքա Գովրիկեանի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը. որ արդէն պէտք է կրի արքեպիսկոպոս տիտղոսը իբրեւ հանգ. Արսէն արքեպիսկոպոս Ադնեանի յաջորդ:

Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

ՊՐԱԽՈՍԼԱԻ ԵԿԵՂԵՑԻ

(Церк. Вѣст.)

Սրբ. Սինոդը որոշել է 1911 թ. նախահաշուի մէջ առանձին գումար մտցնել եկեղ. — ծխ. դպրոցներում գիւղատնտեսական պարապմունք մտցնելու համար:

Ծխական քահանաները շատ անգամ պատճառելով եկամուտների սակաւութիւնը բնակարանի հին և ցուրտ լինելը, ընտանիքի բազմանդամութիւնը, տեղափոխուել են ուզում:

Сѣмѡ. Епарх. Вѣд. ասում է, որ այդ միայն պատրուակ է. իսկական պատճառն այն է, որ քահանաները չեն կարողանում յարմարուել ծխականների հետ: Այնտեղ, ուր քահանաները կարողանում են մօտենալ, յարմարուել ծխականներին, իրանց տեղերում հաստատ մնում են, որովհետեւ ծխականները իրանց հոգևոր տուրքերը սիրով են տալիս և քահանաները լիութեան և առատութեան մէջ են ապրում. ուր սիրում են քահանային, ներում են նրա մի քանի պակասութիւններն էլ, եթէ ունի:

Քահանան շատ միջոցներ ունի իւր հօտի հետ մօտ յարաբերութիւն ունենալու: Առաջինը՝ ժողովրդի առօրեայ կեանքում օգտակար լինելն է, բայց դժբաղդաբար քահանաները սովոր չեն այս ուղղութեամբ գործելու: — Ծիշտայնպէս, ինչպէս մեր հայերիս մէջ է:

— Ռուս ժողովուրդի մէջ վերջին ժամանակներս նկատելի է երկու ուղղութիւն: Մի կողմից կենդանի հետաքրքրութիւն դէպի կրօնական խնդիրները, որի ապացոյցներն են բազմաթիւ ազանդներն ու հերձուածները. միւս կողմից՝ սառնութիւն և անտարբերութիւն դէպի եկեղեցին և շատերի հեռանալը:

Սրա պատճառը, ասում է «Россия» լրագիրը, հովիւների սառն վերաբերմունքն է դէպի իրանց հոգևոր պարտաւորութիւնները: Նրանք շատ անգամ նման են աւելի պարտաւորութիւն ձևական կատարողների քան իրանց պաշտօնին անկեղծօրէն նուիրուած քահանաների: Այս տեսնում և զգում է ժողովուրդը. իսկ ազանդների մէջ, որքան և սնտրիապաշտութիւն լինէին նրանք, նա տեսնում է շատ անկեղծութիւն, սրտագին վերաբերմունք: Ահա պատճառը թէ ինչի՞ եկեղեցուց հեռանում են, և լայն հոսանքով ազանդներին գիմում:

